



## 45. ՀՈՐ ՏՎԱՄ ԻՐԵՔ ԽՐԱՏԼ

Ավալ ժամանակին<sup>1</sup> ըլնում ա շինում մի մարդ, ունենում ա մի ձինումար տղա: Էդ մարդը չունքի շատ էր ծերացե, դե՛ն ընկե, հա՛յ-հա՛յը գնացե՝ վա՛յ-վա՛յը մնացե, տղին ուզեց՝ քանի սաղ ու կենդանի ա, մի փեշակի տա, բա՛լի իրանից եղը մի կտոր հացի տեր րինի, զլուխ պահի: Համա խեղճ հերը ի՛նչ բանի դրեց, ի՛նչ փեշակի տվեց՝ շէլավ, մի տեղ էլա շընակալեց, թողաց, սալախանի սրած ընկավ քուչերը:

— Զըհա՛նդամը զյոռը, — ասեց հերը, — ա՛րի դուքան դնեմ տենամ, բալի ընդե սթրում ա: — Թերեց տղին դուքան դրեց:

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց ամիս, մախլասի՝ մի տարի, էս մարդն ա՝ մի դաֆիլ հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում. կանչում ա տղին:

— Ա՛յ որդի, — ասում ա, — տենում ես հրես մեռնում եմ. ինձանից եղը ինչ պտի անես. Հլա ջահել ես, աշխարի խերն ու շառը շես զիտա: Ո՛րդի, — ասում ա, — քեզ ուզում եմ իրեք իրատ տա. կլսես՝ դու զիտաս, շես լսի՝ էլի՛ դու զիտաս, մեղքն ու վարձքը քու շինքը:

<sup>1</sup> Տպաղիր տեսառում այս բառին հաջորդում է՝ էջմիածնում, որը չնշված է բանահավաքի ձեռքով, Զեղված է նաև այդ բառի մասին տողատակին դրված ժանոթությունը. «Վաղարշապատ զյուղը նանախ այսպիս է կոշկում աեղացիներից» (Ա. Կ.):

— Այ հեր,— ասում ա տղեն,— կլսեմ, խի՛ չեմ լսի:

— Այ որդի,— ասում ա,— որդի ըլնես, ինչ բանի էլ որ զուզ-չուղ անես, հենց որ ժամի ձեռնը լսեցիր՝ ձեռիդ ինչ վառ ըլնի՛ թո՛ղ, գնա՛ ժամ, ասսում աղոթք արա՛: Էս մի՛ն: Մարդ ա, ո՛րդի, կպատահի ճամփա կէթաս, որ վարար ջուր ռաստ գա՝ առանց վա-լադ մարդի լըմնես անց կենաս. մի քանի օր էլ եղ ինկ, բա՛ն շկա, ընշանք սրա՛ն, նրա՛ն հարցնես, հարց ու փորձ անես, մարդ զըս-նես, գա քեզ անփորձանք անցկացնի: Ըս էլ է՛րկու: Վրա իրեք էլ, ո՛րդի, ինձանից քեզ ամանաթ, գշերը ըսկի ճամփա շէթաս, հենց ո՛րդի մթնեց, վե՛ր արի, կա՛ց, ընշանք լիսանա, մի՛ ասի թե՛ ֆլա՛ն գեղը մոտիկ ա, էթամ հասնեմ, չէ՛: Հրե՛ս ո՛րդի, է՛ս ա իմ իրեք խրատը. սրանից դենը դու գիտաս, կլսե՞ս դու գիտաս, շես լսի՛ է՛լի դու գիտաս, մեղքն ու վարձքը քու շլինքը:

Ասում ա, ֆոգին տալիս: Տղեն տանում ա հորը առոք-փառոք, ո՛նց որ կարգն ա, թաղում, թողում գալի տուն:

Անց ա կենում լսենց մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մի ամիս, էրկու ամիս, մախլասի՛ իրեք ամիս, օրեն մի օրը էս տղի ընկերտինքը, որ իրա նման առուտուրական ին, ճամփի թաղարեք են տենում, ասում են, ուկթանք թիֆլիս ապրանքի, դուքանի հմար ճոթ-մոթ առնենք, բերենք: Էտ տղեն էս որ իմանում ա, միտք ա անում՝ ինքն էլ հետները վե կենու էթա, հա՛մ աշխարք տենա, համ էլ թազա ապրանք բերի, լրցնի դուքանը, ծախի:

Գալիս ա ընկորտանցն ասում.— Ես էլ եմ ուղում գա ապրան-քի, շե՞ք տանի:

— Գալիս ես՝ ա՛րի,— ասում են,— խի՛ շենք տանի:

— Ե՞ր էք ճամփա ընկնում,— հարցնում ա:

— Ֆլա՛ն օրը,— ասում են:

Լա՛վ! էս տղեն ա՝ ճամփի թաղարեք ա տենում, մի սաղ ամսվա պաշար վեր ոմում, քոչ ու բարիսանա անում, ընկորտանց հեննա վե կենում, ընկնում ճամփա գպա թիֆլիս:

Գալիս են գալի, շատն ու քիշն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՛ մի ամիս, հասնում են թիֆլիս: Ըստե ամեն մարդ իրա առուտուրն անում ա, պրծնում, եննա քոմմքով էլ վեր են կենում, բեռները կա-պոտում, քոչ ու բարիսանա անում, քրեհղարներ բռնում, ետ գառ-նում գալի իրանց երկիրը: Քոմմքից եղը մնում ա էդ տղեն. դա էլ

որ իրա առուտուրն անում ա, պրծնում, ինչ որ դուքանի հմար պետքն էր առնում, էթում ա քրեհղարներ կանչում. գալիս են նրա ապրանքը բարձում ձիանիթը, հենց որ լիսը բացվում ա ընկնում են ճամփա:

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի<sup>1</sup> մի շարաթ, ճամփին մի վարար ջրի ռաստ էկան, էնքա՛մ վարար, էնքա՛մ վարար, էնքա՛մ վարար՝ հենց իմանաս հետք արին էր բերում: Խեղմերը մնացել ին գլխների վրեն շիվարած, չին իմանում ի՛նչ անեն, ի՛նչ շանեն, ո՞նց ջուրն անց կենան: Քրեհղարներն ուզում ին տա անց կենա էն դրաղը, տղեն շթողաց, հոր վասիաթը միտող բերեց թե. «Վարար ջուր ռաստ գալիս, առանց վալադ մարդի շանցկենաս»:

— Զէ՛, ա՛ղպեր,— ասեց տղեն, — ըստե բեռները վե դնենք, էթանք ըստերանք հարց ու փորձ անենք, բալի մի վալադ մարդ դանենք, զա մեզ անփորձանք գետն անցկացնի:

Քրեհղարներից մինը էն գդիցը ինքն իրան դուդուզացավ.— Ի՞նչ կա, — ասեց, — անա՛շեններ, որ էդքան վախնում եք. էսթավուր պունուր, մարմանդ<sup>1</sup> ջրիցն էլ մա՛րդ կվախի. ո՞ւզում եք աղաք ես ջուրը մնենմ, եննա՛ դուք:

Ասեց ու զուգուզավարի ձին քշեց. ջուրը մննիլն ու գյում ըլնիլը մին էլափի:

— Հարա՛յ, մաղա՛թ, հեղդվե՛ցի, հասե՛ք, — ձեն տվեց մեր զուգուզ քրեհղարը:

Համա էլ ո՞ւր, բանը բանից անց էր կացե. ընկերուինքը ինչ արին, շարին՝ շկարացին խեղմի հավարին հասնի. իրան էլ, իրա ձիուն էլ ջուրը վե կալալ տարավ, Դե հմի արի տես էն մեկելները ո՞նց են ուրախացե, ո՞նց են ուրախացե, որ տղի խոսքին անկաշ արին, ջուրը չմտան, թե չէ քոմմքով էլ պտի հեղդվեին, էթային ֆողեց-ֆողի կորշեին:

Նո՞ր էդ տղեն ձին նիլնում ա, քշում էթում մոտիկ գեղարենքը, սրա՛ն, նրա՛ն հարց ու փորձ անում, մի վալադ մարդ գտնում, բերում, լավ-լավ փեշքաշներ, բոլ փող խոստանում, որ իրանց գետն անցկացնի, հանի էն դրաղը: Էդ վալադ մարդն ա՛ դե՛ ջրի սաղրիկ տեղարենքը ընե՛նց գիտար, ոնց որ իրա հինգ մատը, ձին նի ա

<sup>1</sup> Տօղագիր տերստում այս բառը բանահավարի ձեռքով շնչված է. Բոզնում ենք այնպես, ինչպես տպագիր տերստումն է (Ս. Կ.).

ըլնում, ընկնում աղաթ, սաղ-սալամաթ դրանց ջուրն անցկացնում, էլ եղ թողում, էթում իրա բանին:

Թիֆլիսից որ նոր ին դուս էկե, էդ տղին ճամփին մի բեզբռդյան ռաստ էկավ: Էս բեզրգյանը ընդե իրա խրիդն արե, էթում էր Գյանջա. էդ<sup>1</sup> տղի խելքն ու քյամալը որ տեհավ՝ շա'տ հավանեց.

— Տղա՛, — հարցրեց բեզրգյանը, — ո՞րդիանցի ես:

— Ֆլա՛ն գեղիցն եմ, — ասեց տղեն:

— Ինձ հենանա ընկեր չե՞ս ըլնի:

— Խի՛ չեմ ըլնի, — ասեց, — համա հերս մեռնելիս ինձ վասիաթ արե, չեմ գիտա դու էլ զա՞րու կըլնես, թե չէ:

— Ի՞նչ վասիաթ ա, ա'սսա տենամ. թե ինձ խեր ա, ձեռ կտա, ինչ պտի ասեմ, որ զարու ըլնեմ:

— Ո՞րդե ըլնեմ, — ասեց տղեն, — ինչքա՛մ վուազ բան էլ ըլնի ձեռիս, հենց որ ժամերը տվին, ալրիալը պտի վե քցեմ, թողամ էթամ ժամ, ասսում աղոթք անեմ: Էս մի՛ն: Ճամփա էթալիս, — ասեց. — ո՞րդե մթնի, ընդե պտի վե գամ, կենամ ընշանք լիսանա: Էս է՛րկու: Վրա իրեքն էլ որ, — ասեց, — վարար ջուր ռաստ գալիս՝ առանց վալադ մարդի շանցկենամ, ոնց որ դու քու աշքովը տեհար:

— Տնա՛շեն, — ասաց բեզրգյանը, — բա՛ն գիտաս, բա՛ն ասա, թե չէ էդթավուր խելոք խրատներին ո՞վ չի զարու ըլնի:

— Լա՛վ, որ զա՞րու ես, բաս ես էլ եմ զա՞րու: Ա՛րի ընկերանանք:

Ընկերանում են: Հստե բեռները բաց են անում, իրար ապրանք համբռում, հաշիվ անում, տղի ապրանքը բեզրգյանի ապրանքից քիշ ա դուս գալի. Ընդուր հմար էլ, տղեն դառնում ա բեզրգյանի շարե ք դարը. սաքի թե՛ ինչ որ աշխատեն, շորս փայից մինը նրանը պտի ըլնի:

— Տղա՛, — ասում ա բեզրգյանը, — բաս որ ըտենց ա, դու վե՛ աղաք-աղաթ գնա Գյանջա, թադարեք տես, ընշանք ես գամ: Հրես քեզ նշանաբան կտամ, — ասում ա, — կտանես կտաս կնկանս, կնիկս, դուքանի բալանիքը կտա, կէթաս բաց կանես, ավլիլ կտաս, կթամ-զացնես, որ ես գամ թե չէ՝ հաղիր ըլնի, բերենք ապրանքը դարսու-տենք, մեր բանին կենանք:

— Լա՛վ, — ասում ա տղեն, — կէթա՛մ:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ Էլմիածնեցի, ուղղումը բանահավաքինն է (Ս. 4.):

Բեղրդյանը նշանաբանը տալիս ա տղին, տղեն վեր ա ոմում, դնում ծոցը, նիլում ձին՝ յա՞լլա դպա Գյանչա:

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ զիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, գշեր, ցերեկ էթում ա, հասնում ա Գյանչա: Էթում ա սրա՛ն, նրա՛ն հարց ու փորձ անում:

— Ֆլա՛ն բեղրդյանի տունը ո՞րն ա,— ասում ա:

— Հրես է՛ս ա,— ասում են:— Տղեն էթում ա դուռը ծեծում, բեղրդյանի կնիկը դուա ա զալի, տենում մի շա՛հել, սի՛րուն, բո՛յով, բուսա՛թով տղա հրեն ընդե կաննած: Կնիկը տղին տենալու բաշտան խելքամաղ ա ըլնում, մնում:

— Ո՞ւմ ես ուզում,— հարցնում ա կնիկը:

— Ֆլա՛ն բեղրդյանի տունն է՛ս ա,— հարցնում ա:

— Հա՛, է՛ս ա,— ասում ա կնիկը:— Խի՞ որ:

Տղեն նշանաբանը ծոցիցը հանում ա, տալի կնկանը ու մինմին ասում, թե ինքն ո՞վ ա, յա ի՞նչ բանի հմար ա էկե: Կնիկը որ իմանում ա բանը ընշումն ա, տղին ուրախ-ուրախ կանչում ա տանում տուն:

— Ա՛յ դու բարո՞վ, հա՞զար բարին ես էկե,— ասում ա կնիկը,— ամեն ճամփեղ սալա՛մաթ. ո՞նց ես, լա՞վ ես: Ախա՛ր ես մե՛ռ քու ճամփեն պահելոն. Խի՞ էսքամ եղացար:

Տղեն մնում ա սառած մտիկ անելոն կնկա երեսին: Ա՛ղպեր, — ասում ա ինքն իրան, — ե՛ս ով, է՛ս կնիկն ով, որ էսքամ հարց ու փորձ ա անում, էսքամ ուզում, խնդում, ծիծաղում, ուրախանում, աշխարով մին ըլնում:

Դո՞րթ ա, կնկա միտքը ծուռն էր, համա խեղճ տղեն միամիտ, սիրտը դուզ, նրան ընենց էր մտիկ տալի, ոնց որ իրա հալալ քվորը:

Կնիկը տեհազի, որ չէ՛, սա իրա սսածը չի, էլ ձեն-ծպտոն հանեց, հենենն ինադ ընկալ. «Թո՞ղ մի մարդս գա, — ասաց ինքն իրան, — էն վախտը ե՛ս դիտամ, դո՞ւ: Գնաց դուքանի բալանիքը րերեց, տվից տղին, տղեն տարափ, դուքանը բաց արեց, պուճախե-պուճախ լավ, սիրուն ջրջոհանեց, սրբուեց, հազիր արեց:

Անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, բեղրդյանն էկավ, տեհազի դուքանը սիրուն ջրջոհանած, ավլած ամեն բան իրա տեղը, սարքին, կարգին՝ ուրախացավ, աշխարով մին էլավ, որ էսթավուր դոշաղ տղա ա ընկե ձեռք: Բերեցին էրկսով բեռները քանդոտեցին,

ապրանքը լրցրին դուքանը, է՛, ոնց որ կարգն էր դարսութեցին, իրանց բանին կացան:

Անցկացավ մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը բեզրգյանի կնիկը կպավ մարդի յախճն.— Ա՛յ մարդ,— ասեց,— քեզ մի սըր պտի ասեմ:

— Ա՛սա,— ասեց,— ա՛յ կնիկ, ասա տեսնամ ի՛նչ ես ասում:

— Պտի էդ տղին,— ասեց,— չո՛վար անես, որ նրա էրեսը էլ լրտեսնամ:

— Իի՞շ, ա՛յ կնիկ. քեզ ի՛նչ ա արե,— ասաց մարդը:

— Բա՛ չե՞ս ասի,— ասեց,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. ուզում էր իմ ռհալալը հարամիւս— նատում ա մարդին մին-մին նազ անում, մնին էրկու ավելացնում:

— Ղո՞րթ:

— Ղո՞րթ:

— Բա ո՞նց անեմ, ա՛յ կնիկ, էդթավուր աչքաբաց, զալում տղին ո՞նց ջուղար անեմ. գիտա՞ս էս մի քանի ամսումը ինձ աշխարքի ներ ա տվի: Սավայի էդ,— ասեց,— հեննեն տարով եմ կապ-նըվե, որ դուս էլ անեմ՝ պտի սաղ տարվա հախը տամ:

— Դո՞ւ գիտաս, ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— դուս կանես՝ Ճա՞վ, չես դուս անի՞ ե՞ս գլուխս կառնեմ ըստիան կկորչեմ:

Խեղճ մարդը մնացել էր էրկու շրի արանքին, չէր գիտա ի՛նչ անի, ի՛նչ շանի: Տղին ջուղար աներ՝ պտի սաղ տարվա հախը տար, դուս շաներ՝ չէր ըլնի, կնկա ձեռիցը շպտի պրծներ:

Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց.— Բա՛լի կարենամ էդ տղին: մի դհով կորցնի, յա սըպանիլ տա, թե չէ էլ ուրիշ ճար իլ-լաշ շկա:

Էդ բեզրգյանը իրանց տան կշտին մի փուռ ուներ. վե կացավ, գնաց փոնչու յախճն կպավ.— Փոնչի՛,— ասեց,— քեզ մի բան կա-սեմ, պտի ա՛նկազ անես:

— Ա՛շիս վրեն, ա՛ղա շան, էրկուսն ասա՛,— ասեց փոնչին:

— Էգուց էն զիսեն,— ասեց,— մընին կորկեմ կուշտդ, կգա կհարցնի, թե. «Աղես ասում էր, ինչ որ քեզ հրամայեցի՝ արե՛ցիր, թե չէս: Էս որ կասի, էլ մտիկ չես տա, է՛ն սհաթը վե կոմես դրան սաղ-սաղ կկոխես փուռը,

— Լա՞վ,— ասեց փոնչին,— դու զրկա՛, նրանից դենը ե՛ս գի-տամ:

Իրիկունը տղեն դուքանիցն էկավ տուն, բեզրդյանը նրան, որ ասես, բան շասեց, սաքի թե բանից խարար չի, Կնիկը հացը բերեց քցեց, նստեցին, կերան, կշտացան, պրծան, դե՛սից-դե՛նից ասեցին, խոսեցին, զրից արին՝ ընլանք քնելու վախտը:

Քնելու վախտը որ էկավ, բեզրդյանը տղին ասեց.— Է՛գուց էն գլխեն կէթաս մեր փոնչու կուշտը, դուռը կծեծես, կհարցնես. «Աղես ինչ որ հրամայել էր՝ արե՛ցիր, թե չէ»: Կասես, էլ եղ կէթաս քու բանին:

— Լա՛վ,— ասեց տղեն,— կէթամ կհարցնեմ:

Պառկեցին քնեցին: Տղեն որ բանից խարար չէր, էն գլխեն թեզ վե կացավ, շորերը հագավ, էրեսը լվաց, գնաց փոնչու կուշտը, որ բեզրդյանն ինչ ապսպրել էր՝ ասի: Քարը վե կալավ, որ դուռը ծեծի, մըն էլ տեհավ՝ ծը՛նդ, ժամերը տվին: Ալբիալը քարը ձեռիցը վե քեց, հոր վասիաթը միտն ընկավ, ասեց. «էթամ ժամ, կինամ ընչանք ժամը դուռը դուս գա, էն վախտն էլ փուռը բաց կըլնի, կգամ կասեմ»: Թողաց գնաց ժամ:

Լա՛վ, Բեզրդյանի կնիկը չոմնքի մարդի միտքը գիտար, էն գըլխեն թեզ վե կացավ, թազա շորերը հագավ, լավ, սիրում զուգմեց, զարդարվեց, կոկվեց՝ ուրախ-ուրախ գնաց ժամ: Մի քիչ ժամումը կացավ, աղոթք արեց (աղոթքը գլխնին խոռվ կենա) <sup>1</sup>, ասեց. «էթամ մի փոնչուն հարցնեք, տեհամ մարդիս ասածն արել ա, թե չէ»: Մի քանի հետ ծոմնը դրեց, էրեսին խաշ հանեց, դուս էկավ, գնաց փոնչու կուշտը, դուռը ծեծեց:

— Էղ ո՞վ ես,— ձեն տվեց փոնչին:

— Ես եմ,— ասեց,— դուռը բա՛ց արա:

Փոնչին դուռը բաց արեց, տեհավ իրա աղի կնիկը:

— Հը՛,— հարցրեց կնիկը,— աղեղ քեզ բան էր հրամայե՛ արե՛ցիր, թե չէ:

Փոնչին էլ ձեն-ծպտոն չհանեց, ալբիալը վե կալավ կնկանը սաղ-սաղ կոխեց թեժ փուռը: Խեղճը հենց իմացավ աղեն դուս հմար ա թամրահ արե. «Ո՛վ գիտա, — միտք արեց ինքն իրան, — բալի մի մովսաննաթություն ա արե մարդին, նա էլ ուզում դրան կորցնիս: Ժամը դուս ա գալի, պրծնում, տղեն գալիս ա փոնչու կուշտը»:

Ժամը դուս ա գալի, պրծնում, տղեն գալիս ա փոնչու կուշտը»:

<sup>1</sup> Փակագծում դրված արտահայտությունը ասացողին է (Ս. Կ.):

— Փոնչի', — ասում ա, — աղեդ ինչ որ թամբահ էր արե՛ արե՛ցիր, թե չէ:

— Հա՛, — ասում ա փոնչին, — արեցի:

Տղեն թողում ա գալի տոմ, բեզրգյանին ջուղաբ տանում, թե փոնչուն հարցրեց, ասում էր՝ ինչ որ հրամայել էր, արել եմ: Ասում ա, ետ գալի էթում դուքանը բաց անում, իրա առուտուրին, իրա բանին կենում:

Բեզրգյանը որ տենում ա տղեն սաղ-սալամաթ ետ էկավ, ալ-րիալը մատը կծում ա. «Բա՛լի, — ասում ա, — կա շկա՛ ըստե մի բան կա»: Վեր ա կենում գալի փոնչու կուշտը:

— Փոնչի', — ասում ա բեզրգյանը, — էդ ո՞ւմն ես կոխե փուռը:

— Աղա՛, — ասում ա փոնչին, — դո՞ւ շասեցիր էն գլխեն ով կգա կուշտդ, ըսե՛նց, ըսե՛նց կասի՛ վե կոմես կկոխես փուռը: Էն գլխեն կնիկդ էկավ, ոնց որ ասել իր՝ ընենց հարցրեց, ես էլ անսաս վե կալա քցեցի թեժ փուռը:

— Ա՛յ հարա՛յ, — ձեն ա տալի բեզրգյանը, — քու տո՛մը քանդ-պի, ոնց որ դու իմ տոմը քանդեցիր, թողիր:

Խեղճը շատ ա գլխին վա՛յ տալի, լա՛ց ըլնում, համա էլ ո՞ւր՝ բանը բանից անց էր կացե: Թողում ա փոր-փոշման, դառը-տիսուր գալի տուն:

Իրիկունը տղեն դուքանիցը գալիք ա:

— Տղա՛, — ասում ա բեզրգյանը, — քեզ մի բան պտի հարց-նեմ, համա որ դրուստը շես ասե՛ էլ ձեռիցս շես պրծնի:

— Ասա՛, — ասում ա տղեն, — կա՛սեմ, խի՛ շեմ ասի:

— Դու ա՛րի դրուստն ասա՛ քու ու կնկանս արանքը ի՞նչ ա անցկացե:

Տղեն առաջ շեմ ու չում արեց, չուզեց մղուր գա, ասեց՝ բալի իզակորուստ անի, համա տեհավ որ չէ, բանը ուրիշ թավուր ա, բե-զրգյանը ամեն բան գիտա, էլ շկարաց պահի. ասեց. «Հալ-նաղլ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան», նստեց մին-մին նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

— Լա՛վ, — ասեց բեզրգյանը, — ես քեզ ավատում եմ, համա որ դու իմ կնկա կորչելու սաբարն էլար, սրանից դենը քու աշխա-տանքը ինձ հարամ ա կացե, որ ոտիցտ ընշանք գլուխ ոսկի էլ դառ-նաս՝ ինձ պետքը շես: Հրես, — ասեց, — էս քու սաղ տարվա թամամ

Հախը. ապրանքից էլ ինչ որ քեզ կհասնի, կէթաս վե կունես, կէթաս  
ևս քու երկիրը: Ատոծ քե՛զ էլ բարի տա, ընձ էլ:

— Էա՛վ, — ասեց տղեն, — որ ուզում ես՝ ըտե՛նց կանեմ:

Հաց կերան պրծան, պառկեցին, քնեցին: Առավոտը լիսը բաց-  
վեց թե չէ, տղեն վե կացավ գնաց դուքան, դուռը բաց արեց, ապ-  
րանքից ինչ որ իրան կհասներ, շորսից մինը վե կալավ, էլ եղ դուռը  
շինեց, բերեց բալանիքը տվեց բեզրգյանին, հեննեն մնաս բարով  
արեց, էկավ բրեհդարներ բռնեց, ապրանքը բարձիլ տվեց, ընկավ  
ճամփա դուզ դպա իրանց գեղը<sup>1</sup>:

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու  
օր, իրեք օր, հինգ օր, մախլասի՝ մի շաբաթ, էրկու շաբաթ՝ հենց  
էն ա<sup>2</sup> հասվե հաս էր՝ գեղի<sup>3</sup> կշտին մութը գետինը կոխեց:

— Քրեհդարնե՛ր, — ասեց տղեն, — բեռները վե՛ դրեք, ըստե  
շաղիր տանք՝ կենանք ընշանք լիսանա, նոր վե կենանք ճամփա  
ընկնենք:

— Տնա՛շեն, — ասեցին քրեհդարները, — էլ ըստե ինչ կա որ  
կենանք. հրենիկ գեղն էրկում ա:

— Զէ՛, որ չէ, — ասեց տղեն, — հերս վասիաթ ա արե, որ գշերը  
ճամփա շէթամ:

Ինչ արին շարին՝ շէլավ, տղեն մի հետ ս ա տ ա ն ի ձին նի էր  
չէի, չէր ուզում վե գա: Դե՛ նրանք էլ ինչ պտի ասեին. բերին բեռ-  
ները վե դրին, շաղիր տվին՝ կացան: Դշերվա մի վախտ տղեն վե  
կացավ, ասեց. «Տենամ քրեհդարները քնե՛լ են, թե չէ, հո գող,  
հարամի շկա՞»: Բեռների շորս բոլորը ման էկավ, է՛ս դիհը գնաց,  
է՛ն դիհը գնաց՝ մըն էլ տեհավ հրենիկ գեղիցը մի մարդ ֆանառը  
ձեռին մի զադ ուսին կրընկում ա դպա գերեզմանները: Ասեց. «Արի՛  
րուսուն պահեմ, տենամ էդ մարդը էս բեվախտին ուր ա էթում»:  
Սատանական ընե՛նց էլ զուզում մթնազշեր էր, ընե՛նց զուզում մըթ-  
նազշեր, որ մատդ մարդի աշքը կոխեիր՝ չէր իմանա: Տեհավ էդ  
մարդն էկավ, էկավ՝ հասավ գերեզմանները. ըտե դե՛ս ընկավ, դե՛ն  
ընկավ, մի քար գտավ. էդ քարը բանձրացրեց, բահով տակը փո-

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ էջմիածին, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

<sup>2</sup> Տպագիր տեքստում հաջորդում է՝ էջմիածին, որը շնչված է բանահավա-  
քի ձեռքով (Ս. Կ.):

<sup>3</sup> Տպագիր տեքստում՝ Հոռոմումի, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

բեց, ուսի զաղը վե դրեց, ընդե ֆորեց, քարն էլ եղ ուսուկով քցեց վրեն, թողաց, գեղի ճամփեն բռնեց զնաց:

Տղեն էս որ տեհավ, ուրախացավ, աշխարով մին էլավ: Խեղճը հենց գիտար էն մարդը խաղինա յա ապրանք բերեց, էն քարի տակին ֆորեց, ասեց. «Կէթամ, կհանեմ, կհարստանամ, մալ ու դոլ-վաթի տեր կըլնեմ»: Լա՛վ: Դե՛ս մտիկ տվեց, դե՛ն մտիկ տվեց, տեհավ քրեհգարները ընենց խոմփալին քնած են, որ ոններիցը բռնեիրդեն քցեիր՝ լին իմանա: Նրանց թողաց ընդե քնած, ինքը ֆանառը վառեց, յավշշ-յավաշ երմիշ ելավ դպա գերեղմանները. դե՛ս մանէկավ, դե՛ն ման էկավ՝ էն քարը գտավ, ուսուկով բանձրացրեց, տակը միսելի տեղ քանդեց, ընդե պահած զաղը հանեց, դրեց ուսին, բերեց շաղիրը: Բաց արեց ի՞նչ տենա՝ մի սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաք աղջիկ, թագավորի աղջկանը լայաղ շորեր հագին, յարալու արած, արենշաղաղ խանլալն էլ կողքին դրած: Զեռը զրեց սրտին, տեհավ, ընը՛, սիրտը քցում ա: «Բա՛ս լավ ա,— ասեց,— գեռ հլա սաղ ա. թեզով սրան մի ճար անեմ»:

Առավոտը լիսը բացվեց թե չէ, քրեհգարներին ասեց, որ էլ չէ-թան գեղը, ձիանիքը ուրիշ գեղ քշեն<sup>1</sup>:

Դե՛, քրեհգարնե՛րին ինչ, նրանք իրանց քրեհի վեքիլն ին-ձիանիքը բարձեցին, ընկան ճամփա:

Էկան, էկան, էկան, շատն ու քիշն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շարաթ, էկան հասան մի ուրիշ գեղ<sup>2</sup>: Ըստե տղեն իրա ապրանքը քոմմա ծախոտեց, փող շինեց, քրեհ-գարների հախը տվեց, ճամփու դրեց. զոկ օթախ քրեհեց, կացավ. եննա էդ գեղի մհալումը ինչըամ գլուխ հեքիմ կար՝ քոմմքին էլ կանլեց. «Ինչ ուղեք՝ կտամ,— աօեց,— թաքիլան էս աղջկանը մի ճար անեք»:

Էս հեքմներն ին, խելք խելքի. տվին, է՛ս գեղը տվին, է՛ն գեղը տվին, հա՛յ դես, հա՛յ դեն, գշեր, ցերեկ շարշարվեցին՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, կամաց-կամաց հիվանդը լավացավ, վե կացավ, ման էկավ, էլավ ոնց որ մորեն մին: Հեքմներին բոլ փող

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ «...ձիանիքը իշեն դո՛ւզ դպա Գյումրի», խմբագրումը բանահավաքինն է (Մ. Կ.):

<sup>2</sup> Տպագիր տեքստում՝ Գյումրի. նախորդ պարբերության մեջ բանահավաքը այս բառը փոխել է, իսկ տվյալ գեպբում մոռացմամբ թողել է, ուղղումը մեր կողմից է (Մ. Կ.):

ովկեց, ճամփուր դրեց, գնացին: Ընշանք օրս տղեն չէր գիտա՞ էս աղ-  
ջիկն ո՞վ ա, ո՞վ չի, հերնըմեր ո՞մի, չո՞ւնի, յա ոնց ա էլե, որ սրան  
յարալու են արե, բերե էն զերեզմանաքարի տակը դրե, թողե գնա-  
ցի: Որ լավ լավացավ, պրծավ, նոր աղջկանը հարց ու փորձ արեց:

Աղջիկը նստեց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց իրա զլխովը  
անցկացածը:

— Ե՞ս,— ասեց<sup>1</sup>, — թագավորի աղջիկ եմ: Հերս մի սառաֆ  
ուներ,— ասեց,— դրա տղի աշքն ընկել էր վրես, ուզում էր ինձ առ-  
նի: Էդ սառաֆի տղեն ա՝ դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, մարդիկ մեջ  
քցեց, ինչ արեց, չարեց, չէ՛լավ, հերս դա՛րու չէլավ, նա մի հետ  
չէ՛ էր ասե՝ է՛ն դիմը կաննե: Էդ օրվանից սառաֆի տղեն հեննես  
ինադ ընկավ: Օրեն մի օրը, իմ զարավաշների հեննա գնացել ի գե-  
ղիցը դուս սեհը անելու: Հենց գեղիցը միսելի հեռացել ինք, մըն էլ  
էն տեհանք, մի քանի ձիավոր էն դիմը դուս էկան, ձիանոնց գլու-  
խը բրախ տվին ու յա՛լլա դպա մեզ: Էս որ տեհան զարավաշներս,  
վախլություններիցը թողին փախան, ես մնացի մեն-մենակ: Էդ  
ձիավորներն էկան հասան, տեհա դրանցից մինը էն սառաֆի տղեն,  
ձիանոնցից վեր էկան, ձեռ ու ոտս կապեցին, վե կալան, տարան:  
Ես ուշաթափ էլա, մնացի: Էլ միտս շի՛ ո՛ւր տարան, ի՛նչ արին, ի՛նչ  
շարին. մենակ էս ա միտս, որ աշքս բաց արի՝ տեհա կշտիդ:

— Ղո՞րթ ես ասում, ա՛ղջի, թի սուտ, — հարցրեց տղեն:

— Ղո՞րթ:

— Ղո՞րթ:

— Ղո՞րթ:

— Բաս որ ըտե՛նց ա, — ասեց տղեն, — դու ի՛մն ես, ես՝ քո՛ւնը:  
Գնաց էն սհաթը տերտեր կանչեց, էդ տերտերը բերեց դրանց  
պսակեց, էլան մարդ ու կնիկ: Ըստե մի քանի վախտ կացան, եննա  
միտք արին, ասեցին. ուկ կենանք էթանք մեր քաղաքը<sup>2</sup>, տենանք  
ի՛նչ կա, ի՛նչ չկա»: Համա կնկա միտքն ուրիշ էր, նա ուզում էր սա-  
ռաֆի տղից ինադը հանի, նո՞ր որ սիրտը հովանար: Ճամփի թադա-  
րեք տեհան, ի՛նչ ունեին-չունեին կապոտեցին, ընկան ճամփա՞ դպա  
իրանց քաղաքը:

<sup>1</sup> Տպագիր տերտում հաջորդում է՝ էջմիածնա, որը չնշված է բանահավաքի ձեռքով (Մ. 4.):

<sup>2</sup> Տպագիր տերտում՝ էջմիածնն. ուզումը բանահավաքինն է (Մ. 4.):

էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասան իրանց քաղաքը: Ըստեազգական հոգնըմորիցը թափուն զոկ օթախ քրեհեցին, կացան: Անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, տղի ձեռի փողը հատավ, չէր իմանում ի՞նչ անի, ի՞նչ չանի, ո՞ւմ դուռն էթա, ո՞ւմ ձեռը դեմ անի, մի քանի շահի ուղի, որ սթար անեն, ընշանք տենան վերջներն ի՞նչ ա ըլնում: Ըսենց օրեն մի օրը տղեն դառը-տխուր նստել էր, մտքի հենա ընկե:

— Ա'յ մարդ,— ասեց թագավորի աղջիկը, — ի՞նչ ես միտքանում, ասա տենամ դարտդ ի՞նչ ա. Խի՞ ես ըտենց դառը-տխուր նստե, լորնի՞ ձեռիդ խարշը պրծել ա, ընդուր հմար ես միտքանում:

— Հա՛, — ասեց, — ա՛յ կնիկ, քեզանից պահեմ, ասսանից ի՞նչ պահեմ, լափ սըթար-մըթարից ընկել եմ, ո՞նչ փող կա, ո՞նչ զադ. միտք եմ անում, թե մեր վերքն ինչ պտի ըլնի:

Թագավորի աղջիկը էս որ լսեց, էն սհաթը ձեռը տարավ մազերի միջիցը մի ակը հանեց տվեց նրան:

— Ա՛ռ, — ասեց, — էս ակը կտանես բազար, կտաս թագավորի սառաֆի տղին: — Ի՞նչ աժի, — կհարցնես: Կասի. «Հազար էրկու հարիր մանեթօ: — Բաս որ ըտենց ա, — կասես, — վեց հարիր մանեթ տո՛ւ, էն վեց հարիրն էլ քեզ փե՛շքաշ: Սավալի էս, — ասեց, — բան ա, որ սառաֆի տղեն քեզ կանչի, ասի. «Էթա՛նք մեր տունը դոնաղ», կէթաս. համա ընենց կանես, որ հեգսի օրն էլ դու նրանքերես մեր տունը: Իմա՞ցար:

— Իմա՞ցա, — ասեց տղեն, — ոնց որ ասեցիր՝ ընենց էլ կանեմ:

Ակը ձեռիցն առավ, վե կացավ զնաց բազար: Դե՛, շորը-մորը փոխել էր, ուրիշ գելմ մտե, ո՞ր ասես մարդ էլա շնանանշեց նրան, թե ո՞վ ա, ո՞վ լի: Տարավ դո՛ւզ թագավորի սառաֆի տղի կուշտը, ակը հանեց շանց տվեց:

— Էս ակն ի՞նչ աժի, — հարցըրեց:

— Հազար էրկու հարիր մանեթ, — ասեց սառաֆի տղեն:

— Բաս որ ըտենց ա, — ասեց, — վեց հարիր մանեթ տո՛ւ, վեց հարիրն էլ քեզ փե՛շքաշ: Ուա՞զի ես:

— Ուա՞զի եմ, — ասեց սառաֆի տղեն: Էն սհաթը ուրախուրախ հանեց, վեց հարիր մանեթը նազդ համբրեց, ակը ձեռիցն առավ, դեռ հլա իրա միջին էլ ծիծաղաց նրա վրեն, թե էս մարդը

գի՞ծ ա, ի՞նչ ա, որ էսթավուր գյողալ ակը բերել ա, կիսագին ծախում: Իրիկոմը որ էկավ տում, հորը մին-մին նաղլ արեց.— Բա՛ շես ասի,— ասեց,— ա՛յ հեր, ըսե՛նց, ըսե՛նց բան, ըսօր մի տղա բերեց հաղար էրկու հարիր մանեթանոց ակը վեց հարզրով ծախեց, ես էլ առա, թողաց զնաց:

— Ա՛յ որդի, — ասեց հերը, — բա խի՛ շիր էն տղին կանչում, բերում տում, որ լավ պատիվ տայինք, ընենց ճամփու զնեինք: Ո՛րդի, դեռ հլա ջահել ես, շետ իմանում, որ էդթավուրներից մարդ, տեղն ընկած վախտը, շատ խեր կտենա:

— Լա՛վ, ա՛յ հեր, — ասեց, — որ մըն էլ ուստ գա՝ կրերեմ:

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը, թագավորի աղջիկը տղեն էլի դրկում ա բազար, ասում ա. — Է՛ս առ, է՛ն առ, է՛ս բե, է՛ն բե, մախւաս՝ ի՞նչ որ պետքն էր, փող ա տալի, որ էթա առնի:

Էս տղեն ա՝ գեյմը փոխում ա, դուս գալի, էթում բազար: Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, ի՞նչ որ կնիկը թամբահ էր արե՛ առնում ա, թողում գալի տում: Ճամփին սառաֆի տղեն սրան ուստ ա գալի:

— Այ բարո՞վ, հաղա՞ր բարին, — ասում ա սառաֆի տղեն, — քե՞ֆդ, հա՞լդ, ո՞նց ես, լա՞վ ես:

— Փա՛ռք իրա ողորմությունին, — ասում ա, — կա՛նք էլի:

— Ինչ կընի-կընի, — ասում ա սառաֆի տղեն, — ա՛րի ըսօր էթանք մեր տումը զոնադ. շատ վախտ ա իրար չենք տեհե, դե՛սից, դե՛նից կասենք, կխոսանք, զրից կանենք, ընշանք օր ա, կմթնի էլի:

— Լա՛վ, — ասում ա, — սառաֆի տղա, ըսօր որ ես ձեր տումը գամ, խոսք տալիս ես, էգուց էլ դու գաս մեր տումը:

— Խո՛սք եմ տալի, — ասում ա սառաֆի տղեն:

— Դրո՞ւտ:

— Դրո՞ւտ<sup>1</sup>:

— Բաս որ ըտենց ա, է՛թանք:

Վեր ա կենում գալի թագավորի սառաֆի տումը: Գալիս են տում, նստում են, դե՛սից, դե՛նից ասում, խոսում, մասլահաթ անում, ընշանք հացի վախտը գալիս ա, բերում են դաստախումը բաց անում՝ նստում են հացի: Սառաֆի տղեն իրա զոնադին լավ քե՞ֆ,

<sup>1</sup> Տպագիր տեքստում հաջորդում է նույն հարց ու պատասխանի կրկնությունը, որը չնշված է բանահավաքի ձեռքով (Ծ. Կ.).

ուրախովթյո՞ւն ա շանց տալի՛: Ուտում են, խմում, լավ լվում, թըրջ-  
վում, ընենց որ լա՞փ հալից ընկնում են: Դե՛, տղեն է հալին էլ հո-  
չք կարա վե կենա, էթա իրանց տունը, հենց ըստ գշերը մնում ա:  
Մնում ա, առավոտը վե կենում, սառաֆի տղին ասում.

— Սառաֆի տղա՛, հմի՞ ինչ ես ասում. գա՞լիս ես մեր տունը  
դունազ, թե չէ:

— Գա՞լիս եմ,— ասում ա սառաֆի տղեն,— է՛թանք:— Վեր են  
կենում գալի:

Գալիս են տուն: Թագավորի աղջիկը սառաֆի տղին տենալու  
բաշտուն՝ ալրիա՛լը ճանանշում ա, էթում ա տափ կենում, ասում ա.  
«Վա՛յ թե ինձ տենա, բան ֆահմի՛: Էղ էրկով նստում են, ասում,  
խոսում, մասլահաթ անում, ընշանք էղ վախտը թագավորի աղջիկը  
կերակուր ա էփում, հաց-մաց շինում, հաղիր անում: Տղեն տանում  
ա դաստախունը փոռում, կերակուր ածում, բերում զնում իրանց ա-  
ղաքը. նստում են, ուսում, խմում, քեֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն  
լսում ընշանք կես գշեր: Սրանք որ շատ խմում են, գինովանում,  
հենց տեղնուտեղը թեք են ընկնում՝ քնում: Դե՛, հո գինովը, հո մե-  
ռելը մին ա, որ ոտիցը բռնես քաշ տաս՝ շի իմանա: Սրանք էլ  
ըտենց:

Դիշերվա մի վախտ թագավորի աղջիկը վեր ա կենում, էն ար-  
նոտ խանշալը վեր ունում, ո՛ր խանշալով որ իրան յարալու ին արե,  
ուսուկով էթում սառաֆի տղի գլխավիրեկը կանուում: Տենում ա խը-  
ռըմփալեն քնած ա. խանշալը որ շի կոխում փորը, մի քանի հետ էլ  
պտիտ տալի, աղիք-մաղիքը խառնըշտորում, ալրիալը ֆոքին տա-  
լիս ա: Նո՛ր մարդին բոթում ա, վե կացնում: Մարդը վեր ա կենում  
տենում ի՞նչ՝ սառաֆի տղի մեյիդը կողքին էրկեն մեկնվել ա, աղիք-  
մաղիքը դուս թափած, արնի միշին կորած:

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— էս ի՞նչ զուզում բերիր մեր գլուխը,  
հմի հո մենց ֆողեց-ֆոդի կորանք:

— Բա՛ն շկա,— ասում ա կնիկը,— որան տեղն ա. ես հո ինադս  
հանեցի, սրանից գենը ինչ ուզում ա ըլնի: Մի շորի միշի էղ օլում  
կփաթթես,— ասում ա,— կտանես գերեզմանները, ման կգաս, էն  
գերեզմանաքարը կգտնես, որդե ինձ բերել ին ֆորե, տակը լավ  
կփանդես, կդնես ընդե, ֆողը վրա կտաս, քարը էլ եղ կքցես վրեն,  
կթողաս կգաս:

Մարդն էլ տենում ա, որ ճար, իլլաշ լկա, կնկա ասածը պտի:

անի. բերում ա էդ օլուն մի շորի միջի փաթթում, դնում ուսին, տանում գերեզմանները, դե՛ս, դե՛ն ընկնում, ման գալի, էն քարը գտնում, բանձրացնում, տակը քանդում, մեյիդը դնում ընդե, ֆողը վրա տալի, քարը էլ եդ գցում վրեն, թողում գալի տուն:

Առավոտը լիսը բացվում ա թե չէ, կնիկն ասում ա մարդին.— Ա՛յ մարդ, սրանից գենը ըստերանք մնալը հարամ ա, պտի գլուխ առնենք էթանք ուրիշ երկիր, թե չէ որ իմացան, բանը բացվեց, վա՛յն էկել ա մեզ տարե: Կէթա՛ս,— ասում ա, — ինձ հմար, մի ձեռք տղամարդի շոր կառնես, թուր, ասպար ու մի հատ էլ լավ քյահլան ձի, մախլաս՝ ճամփի հմար ինչ պետքն ա կառնես, վե կենանք էթանք Ըստամբուլ, ընդե կենանք, ընշանք տենանք վերջներս ի՛նչ ա ըլնում:

— Լա՛վ, ա՛յ կնիկ, — ասում ա մարդը, — թող ըտենց ըլնի, էթամ առնեմ:

Էս մարդն ա՛ գեյմը փոխում ա, վե կենում, էթում բազար, դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, կնկա հմար մի լավ ձեռք տղամարդի շոր ա առնում, ասպար-մասպար ա առնում, էրկու էլ քյահլան ձի, թողում գալի տուն: Էդ գշեր ըտե մնում են, ճամփի թադարեք տենում, ի՛նչ ունեին-շունեին բերում, հազիր անում, առավոտը գեռ լիսն ու մութը շրաժանված, մարդ ու կնիկ վեր են կենում, թագավորի աղջիկը տղամարդի գեյմ ա մննում, ասպարավորվում են, ասսու անումը տալի, թոնում ձիանիքը՝ յա՛լլա:

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, զալիս են մի շայիր-լիման տեղ, մի աղքրի կշտի վե գալի, մի քիչ դինշանան, հաց-մաց ուտեն, էլ եդ վե կենան էթան իրանց ճամփեն: Թագավորի աղջկա վրեն հո էլ հալ չէր մնացե՝ բեղարել էր, թըլլպպի, մնացե: Ախար խեղճը ազիզ-մազիզ մենծացած, արեի էրես շտեհած՝ կարար իրեք օր իրար վրա ճամփա էթա, ըն էլ ձիով: Հաց որ կերան պրծան, գլուխը որեց տղի ծընկանը, ասեց. «Մի քիչ աշքս էլա կացնեմ, դինշանամ»: Տղեն տեհհավ, որ քնեց, ինքն էլ իրա դարտի հենան էլավ:

— Հրե՛ս, — ասեց ինքն իրան, — ձեռներիս փողը պրծնում ա, սրանից դենը ինչ պտի անենք. ո՞ւմ դուն էթանք, ո՞ւմ ձեռը մեկնենք, մի կտոր հաց ուզենք: Կնիկս, — ասեց, — է՛ն դոնում որ մի ակը տվեց, տանեմ խարշեմ, իրա մազերի միջիցը հանեց, ա՛րի մի ման գամ, տենամ նրանից է՛լ կա, թե հենց էն էր, որ տվեց:

Անկազ դրեց, տեհավ խըսրմփալեն քնած ա, ուսուլով ձեռք  
տարավ մազերը, դե՛ս քրքրեց, դե՛ն քրքրեց, մըն էլ ի՛նչ տեսնա՝ մի  
կարմիր մահղի կտոր, վրեն օխտ-ութ ակը շարոտած, ընն'նց էլ մի  
շողշողում ին, Քըրֆըրահար գալի, որ քիչ էր մնում մարդի աշք քո-  
ռացնեին թողային: Էս որ տեհավ, նոր մի քիչ խեղճի սիրուր ար-  
խեյնացավ, տեղն ընկավ: Քրտենած մատներով որ բռնել էր, ակները  
մի քիչ սևացել ին, ասեց. «Դնեմ արկը, շորանա, եղ վեր ունեմ պա-  
հեմ»: Մահղի կտորը վե կալավ, դրեց արկը: Որդիան որ էր է՛ն  
դժիցը մի ագռավ վեր էկավ, հալբա՛թ իմացավ միս ա, մահղի կտո-  
րը կտցեց, թուավ: Տղեն ընկավ եննուցը, թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա  
թըռ, թը՛ռ հա թըռ, համա էլ ո՛ւր, տարավ ու տարավ: Շատ զլսին  
վա՛յ տվեց, լաց էլավ՝ համա էլ ի՛նչ, բանը բանից անց էր կացեւ:  
Մնացել էր շիվարած, չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի, ի՛նչ էրե-  
սով կնկա էրեսին էրևա: Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց  
լավն էն ա զլուս վեր ունեմ, էթամ մի դհով, աշխատանք անեմ,  
մի քանի շահի հալաքեմ, նոր ընդիան տամ էթամ Ըստամբոլ: Չուն-  
քի գիտար, եղ ու աղաք թագավորի աղջիկն էլ կզա Ըստամբոլ, ասեց.  
«Ընդե իրար կգտնենք»: Ըտենց էլ արեց, ուսուկով կնկա զլուսը վե  
կալավ ծնկան վրիցը, դրեց գեննին, բերեց ձին թամքեց, նի էլավ՝  
յա՛լլա:

Գնաց, գնաց, գնաց, շատ գնաց թե քիշ՝ աստոծ ա խաբար, մի  
օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, լիս գնաց, մութ գնաց՝  
դուս էկավ Թիֆլիսա շհարը: Ըստե իրա ձին, ասպարեները քոմմա  
ծախոտեց, փող շինեց, որ նրանով մի քանի օր սթար անի, ընշանք  
մի քանի կանիլը: Դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, սրա՛ն հարցրեց, նրա՛ն  
հարցրեց, վերջը մի հարուստ մարդի ուստ էկավ:

— Ա՛ղպեր,— հարցրեց էդ հարուստ մարդը,— կատեպան չե՞ս  
ըլնի:

— Խի՛ չեմ ըլնի, աղա,— ասեց տղեն,— զաթի ես էլ գեղցի,  
ուանշպար մարդ, հենց էդ իմ սիրած փեշակն ա:

Իրար հեննա խոսսացին, պրծան, բարըշեցին տարեկան եռեսուն  
մանեթ, վրեն էլ մի ձեռք շոր:

Էս մեր կատեպանն ա՝ Թիֆլիսա շհարումը մնում ա, էդ հա-  
րուստ մարդի հիքին բեշարում, մուղաթ կենում, իրա վախտին  
շրում, քախանում, էտում, թաղում, եղ տալի, մախլաս, զլսներդ  
ի՛նչ ցավացնեմ, հիքումն ինչ շարշարվում էր՝ շարշարվում, իրի-

գունը դալիս էր, նրանց տան բանին հասնում, աղաքներին զուզում  
անում, է՛ս անում, է՛ն անում, ընենց որ քոմմքով էլ նրան ընե՞նց  
ին սիրում, ընե՞նց ուղում, ոնց որ մի տան տղա: Ըսենց մի քանի  
տարի կացավ դրանց կշտին, մի քանի մանեթ փող շինեց, վերջը  
միտք արեց, ասեց. «Եթամ կնկանս հավարին, աշխարե-աշխար,  
երկրե-երկիր ման գամ, բալի գտնեմ»:

Էղ հարուստ մարդը շատ կպավ յախեն, թե մի տարի էլ կա՛ց,  
մի՛ էթա՛ չելավ, ասեց.— Չե՛մ կարա, որ չե՛մ կարա, մուրազ ունեմ,  
պտի էթամ:

Դե՛ աղեն էլ ի՞նչ պտի ասեր. տեհավ՝ շիլնում, չի ուղում, բե-  
րեց նրա փողը տվեց, մի ձեռք էլ լավ շոր առավ, հազրեց, ճամփու  
դրեց. Կատեպանը հենց նոր էր ոտք շեմքիցը դուս դրե, աղեն են-  
նուցը ձեն տվեց:

— Տղա՛,— ասեց,— մտիցս ընկել էր, մեր հիքումը մի շոր  
բարդի կա, մի է՛թաս կտրե՛ս, կոտորես, ցախ անես, լցնես սելը,  
բերես տուն, եննա էթում ես՝ գնա՛, աստոծ քեզ հեննա:

— Ա՛չիս վրեն, ա՛ղա,— ասեց կատեպանը,— ըստե ինչ կա,  
որ բու խաթրը կոտրեմ. ըսօր չեմ էթա, էգուց կէթամ, մին չի՞:

Էն սհաթը եղ դառավ, էկավ տուն, սելը լծեց, կացինը քցեց  
վրեն, պարանը քցեց վրեն, քշեց՝ դուզ դպա հիքին: էկավ հիքին,  
կացինը վե կալավ, գնաց աղի ասած բարդին կտրեց, կոտորեց,  
բարձեց սելը, եննա ուղում էր ծառի խուր ու խուշը<sup>1</sup> կիտի, տեհավ՝  
ը՛նը, ագռավի տարած մահդի կտորը՝ ակները քոմմա վրեն, Էղ  
խուր ու խուշի միշին: Դու մի՛ ասի, էն ագռավի բունը էն բարդու  
ծերին ա էլե. մահդի կտորը որ կտցել ա, բերել ա դուզ իրա բունը:

— Փա՛ռեդ շատ ընի,— ասեց,— աստոծ, որ իմ մալը էլ եդ  
ինձ դսմաթ արիր. Էս հետ պարզէրես կէթամ կնկանս կուշու:

Ակները շորի միշին զայիմ փաթթեց, դրեց շերը: Բերեց սելը  
լծեց, քշեց էկավ, ցախը տանը գարտկեց, գշերն էլ ընդե կացավ,  
նոր էն մի օրը առավոտը սուրբ ծերի հեննա վե կացավ, ուրախ-  
ուրախ ճամփա ընկավ դպա Ստամբոլ:

Սրան թողանք էթա, գանք խաբար տանք թագավորի աղջը-  
կանիցը:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ խուզուր-մուզուրը, ուղղումը բանահավաքինն է  
(Ա. Կ.):

թագավորի աղջիկն ա՝ ո՛ր մի վախտ աշքը բաց ա անում, տեսնում մարդ-մադաթ չկա, մարդի ձին էլ ընդե շի՝ նստում ա ուրուրուր լաց ըլնում: Զեռը տանում ա մազերը, տենում խճճված ու ակներն էլ միջին շի:

— Հե՞յ գիտի թամահքյար մարդ,— ասում ա,— քնած վախտս ակները հանել ա, գլուխ առե, փախե: Փա՛ռք քեզ,— ասեց,— աստոծ, փա՛ռք քու ողորմությունին:

Խեղճը կենում ա, կենում ա, ասում ա. «Ով գիտա, բալի մարդս գալիս ա»:

Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ էնքա՛մ կենում ա, որ մութը գետինը կոյխում ա, տենում ա՝ ո՛նչ մարդ կա, ո՛նչ զադ, նո՛ր վեր ա կենում դառը-տխուր ձին նիլնում, ընկենում ճամփա: Գալիս ա, զալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարաթ, էրկու շարաթ, իրեք շարաթ, մախլասի՝ մի ամիս, զշեր, ցերեկ գալիս ա, հասնում ա Ստամբուլա շհարը: Զեռին էլի շատից-քշից փող ա մնացած ըլնում, բերում ա ըստե էդ փողովը մի փուռ ա բաց անում, հաց ծախում. սավայի էդ՝ մի հատ էլ զարըրանոց ա շինիլ տալի, որ շհարումը ի՛նչքամ քյասիր-քյուսուր, զարիր մարդ ըլնի, գա, ըտե սթար անի. տի՛մ լի, — ասում ա, — ըսենցությունով կարենամ մարդիս գտնիս:

Ըսենց մեր կատեպանն էլ, որ մի բանի տարուց եղը ոտք դնում ա Ստամբուլա շհարը, էթում ա սրա՛ն, նրա՛ն հարցնում, թե. — էնթավուր էժան քարվանսրա, զադ շե՞ք գիտա, էթամ վե զամ:

— Հրենիկ ֆլա՛ն տեղն, — ասում են, — ֆլա՛ն մարդը զարըրանոց ա շինե, քյասիր-քյուսուր, զարիր մարդիկ էթում, ընդե կենում են, ո՛նչ փող են տալի, ո՛նչ զադ. ուզում ես՝ զո՞ւ էլ զնա:

Զաթի նա էլ էսթավուր բանի էր ման գալի, ուրախ-ուրախ վեր ա կենում, էթում՝ հարցնելոն, հարցնելոն <sup>1</sup> ման գալի, էդ զարըրանոցը գտնում:

— Ղա՛րիր եմ, ա՛նճար եմ, — ասում ա կատեպանը, — շի՞լնի, մի տեղ տաք, սթար անեմ:

— Խի՞ շիլնի, — ասում են: Բերում են սրան մի օթախ տալի, որ կենա:

<sup>1</sup> Տպագիր տեքստում նույն «ճարցնելոն» բառը կրկնվում է երրորդ անգամ, որը բանահավաքի ձեռքով չնշված է (Ս. Կ.):

Թագավորի աղջիկը տղին տենալու բաշտան ալրիալը մատը կծում ա. «Բա՛լի,— ասում ա ինքն իրան,— էս նա ա, ո՛ր նա»: Համա ճանանշություն չի տալի. ասում ա. «Տենամ սրա վերջն ինչ ա ըլնում: Տղեն հո, ո՛ր ասես, չի ճանանշում կնկանը. Հենց իմանում ա, զորթմանց փոնչի ա:

Սրանց թողանք ըստե, գանք խարարն ո՞ւմից տանք՝ սրանց երկրի թագավորիցն ու նրա սառաֆից:

Խարարը որ բերին թագավորին, թե. «Աղջկանդ փախցրին, տարա՞ն», էն սհաթը թագավորը ձիավորներ դրկեց քամակներիցը, որ էթան կալնեն, բերեն: Համա ընշանք գնալները, նրանք իրանց մանզղիլը կտրել ին: Զիավորները դափ-դարտակ ետ դառան, էկան: Ենան թագավորը թագաղան մարդիկ դրկեց, իրա երկրումն էլ տեղ շթողացին՝ ման էկան, սա՛ր, քա՛ր, քո՛լ ոտատակ տվին, էլ մարդ շթողացին՝ հարցրին, աղջկանը շգտան ո՛ր շգտան:

Ըսե՞նց էլ թագավորի սառաֆը. խեղճը մեռավ ման գալոն, շարշարվելոն, դե՛ս, դե՛ն ընկնելոն, սրա՞ն, նրա՞ն հարցնելոն՝ ո՞նչ տղա գտավ, ո՞նչ զադ. Էն կորչիլն էլ որ կորավ՝ ո՞նչ իզն էրևաց, ո՞նչ թողը:

Անցկացավ ըսենց մի տարի, էրկու տարի, իրեք տարի, մախ-լսակ՝ հինգ տարի, թագավորը, որ շատ դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, էլ տեղ շթողաց ման էկավ, աղջկանը շկարաց գտնի, օրեն մի օրը կան-չեց իրա սառաֆին:

— Ա՛ղպեր,— ասաց,— ըսե՞նց բան չիլնի. իմ աղջիկն ա ոտով-զլիսով կորե, քու էլ՝ տղեն. կա շկա, ըստե մի բան կա: Ա՛րի,— ասեց,— էրկուով էլ շորներս փոխենք, աղքատի գելմ մննենք, էթանք աշխարե-աշխար, երկրե-երկիր ման գանք, բա՛լի գտնենք, բերենք:

— կա՛վ ես ասում, թագա՛վորն ապրած կենա, — ասեց սառա-ֆը, — է՛թանք:

Թագավորն ու սառաֆը խոսքները մին արին, աղքատի շորեր հագան, մի բանի տարվա ճամփի պաշար վե կալան, ընկան ճամ-փա: Դե՛ն գնացին, դե՛ս գնացին, է՛ս քաղաքը, է՛ն քաղաքը, է՛ս գեղը, է՛ն գեղը, էլ տեղ շթողացին՝ տակն ու վրա արին, շգտան: Վերջն ասեցին. «էթանք Ստամբուլա շհարը, մի՛ ընդե սալըդ առ-նենք, տենանք»:

Ժամփեքը ծռեցին դպա Ստամբոլ: Էկան, էկան, շատու  
ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու  
շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասան Ստամբոլ: Եհա-  
րի մեջը որ մտան՝ սրա՞ն, նրա՞ն հարցրին, թե. — Զե՞ք գիտա էն-  
թավուր էժան բարվանսրա, զադ, էթանք վե գանք:

— Խի՛ շենք գիտա, — ասեցին, — Հրե՛ն ֆլա՛ն տեղը, ֆլա՛ն  
մարդը դարձրանոց ա շինե, ո՞վ ասես՝ էթում ա վե գալի, ո՞նչ փող  
ա տալի, ո՞նչ զադ:

Թագավորին ու սառաֆին աղաք են անում, բերում էդ զարբ-  
րանոցը:

— Ղա՛րիք ենք, — ասում են թագավորն ու սառաֆը, — Մ՛լի  
մի տեղ տաք, սթար անենք:

— Խի՛ շինի, — ասում են: Բերում են սրանց մի օթախ տալի,  
որ իրանց հմար կենան:

Փռնշին թագավորին ու սառաֆին տենալու բաշտան՝ ալրիալը  
ճանանշում ա. Համա ո՛ր ասես ձեն, ծպտոն շի հանում, ասում ա.  
«Տենամ սրա վերջն ի՛նչ ա ըլնում»:

Թագավորն ու սառաֆը հո, ո՛ր ասես, փռնշուն շճանանշեցին:  
Դե՛, ախար որդիան որդե. ո՞ւմ մտքով կանցկենար, որ թագավորի  
աղջիկը կգար Ստամբոլ, փռնշու գեյմ կմններ, դարձրանոց բաց կա-  
ներ, նրանց ռաստ կգար:

Անցկացավ ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի  
շաբաթ, օրեն մի օրը փռնշին բերեց զռնաղլրդ սարքեց, թագավո-  
րին, սառաֆին ու կատեպանին (իրա մարդին)<sup>1</sup> կանշեց զռնաղ: Դե  
նրանք էլ ի՛նչ պտի ասեին՝ ուրախ-ուրախ վե կացան, էկան: Փռն-  
շին էս իրեքին ընե՞նց մի լավ քե՞ֆ, ընե՞նց մի լավ ուրախությո՛մ  
շանց տվեց, որ էլ ասել շի ուզի:

Գլխները մի լավ տաքացավ գինուցը, փռնշին խոսք բաց արեց:  
— Ի՞նչ մարդ եք, — հարցրեց, — ի՞նչ բանի հմար եք էկե ըս-  
տերաներ:

Թագավորն ու իրա սառաֆը ջուղար շտվին, մնացին իրար էրե-  
սի մտիկ անելոն: Համա կատեպանը, որ տեհավ՝ սուս են կացե,  
ձեն, ծպտոն շեն հանում, ինքը էն գհիցը վե կացավ, մին-մին իրա  
զլսումն անցկացածը նազլ արեց, ոնց որ ես ձեզ նազլ արի. ասեց.

<sup>1</sup> Փակագծի մեջ դրված բացատրությունը ասացողին է (Ս. Կ.):

— Ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց րան. էսքամ վախտ էլ ես աշխարհ-աշխար, երկրե- երկիր եմ ընկե, իմ կնկա հավարին եմ ման գալի:

Թագավորն էս որ լսեց թե չէ, էն դհիցը ձեն տվեց.— Տղա՛,— ասեց,— է՛ն<sup>1</sup> թագավորը հենց ես եմ, որ կամ: Բաս որ բտնեց ա,— ասեց,— հախ ու նհախ իմ աղջիկը ես քեզանից կուղեմ, էլի դու խարար կրնես նրանից, մարդ չէ:

— Ես էլ թագավորի սառաֆն եմ,— ձեն տվեց էն մեկել դհից սառաֆը,— ես էլ իմ տղեն կուղեմ քեզանից:

Նոր ըստե փոնչին (թագավորի աղջիկը)<sup>2</sup> մեջ ընկավ:

— Թագա՛վորի սառաֆ,— ասեց փոնչին,— դու քու տղեն ես ուղում, ընենց չի<sup>3</sup>:

— Հա՛,— ասեց սառաֆը:

— Տղիդ ինչ ա՛րել են,— ասեց փոնչին,— տեղն ա. խի՛ էր ու- զում թագավորի աղջկանը սրպանի, որ վերջն էն օղիեն իրա զովկաը զար: Էդ ասսու հալալ դատաստա՞նն ա,— ասեց,— որ էլ խոսք չու- նես ասելու— Եննա թագավորին հարցրեց.— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— դու էլ քու աղջիկն ես ուղում, ընենց չի<sup>3</sup>:

— Հա՛,— ասեց թագավորը:

— Կա՛ց, — ասեց,— էթամ բերեմ: — Գնաց իրա օթախը, փոնչու շորերը հանեց, աղջկա շորեր հազավ, զլուկը շինեց, կոկեց, զուգ- վեց, զարդարվեց՝ էկավ ընդե կաննեց:

Աղջկանը տենալու բաշտան թագավորը մի դհից, տղեն մի դհից վաղեցին, փաթթվեցին ճտովը, ուրախությունից լաց էլան, խոսք չէր գալի բերանները, որ խոսային: Սառաֆը հո՛ մնացել էր էշ կըտ- րած, բերանը բաց սրանց մտիկ անելուն:

Նոր նստեցին թագալան քե՞ֆ, ուրախությո՛ւն, ընշանք լիսլի- լիս կերան, խմեցին, զա՛ն ասեցին, զա՛ն լսեցին, իրար զլխով անց- կացածը նազլ արին, հին դարմանը բամուն տվին, դաղդա՛ն, դաշ- դա՛ն, դե՛սից, դե՛նից ասեցին, խոսացին, մասլահաթ արին:

Սրանից գենը մի քանի օր էլ կացան Ստամբուլ, նոր ըստե ինչ ունեին-չունեին, հավաքեցին, կապոտեցին, քոլ ու բարիխանա արին, ճամփի թագարեք տեհան, շորսով ընկան ճամփա՛ դպա իրանց երկիրը:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ էլմիածնա, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

<sup>2</sup> Փակագետերի մեջ դրված բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.):

էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա<sup>1</sup>, հասան  
իրանց երկիրը<sup>2</sup>: Նոր ըստե թագավորը բերեց իրա աղջկանը թա-  
զադան նշան դրեց տղի վրեն, պսակեց, օխտն օր, օխտը գշեր հար-  
սանիք արեց: Էլ ինչ քե՞ֆ, ինչ ուրախություն, ինչ դափ ու զուռնա՛,  
որ էլ հալ ու հեսար չկար:

Նրանք հասան ի՛րանց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մու-  
րազին:

<sup>1</sup> Տպագիր տեքստում հաջորդում է. «մի օր, էրկու օր, իրեն օր, մի շաբաթ,  
էրկու շաբաթ, իրեն շաբաթ, մախասի մի ամիս», որը շնչված է բահահավաքի  
ձեռքով (Ա. Կ.):

<sup>2</sup> Տպագիր տեքստում՝ էջմիածին. ուղղումը բանահավաքինն է (Ա. Կ.):

